ՍՈԹՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎՐԱ «ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԸ՝ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՈԹՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ

Իրականացնող՝ ՓԳԹ Անահիտ Մկրտչյան

«Համայնքային փոխօգնություն» սոցիալական ՀԿ ղեկավար

ԵՐԵՎԱՆ ապրիլ 2019

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության «Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները՝ ԱՃԹՆ գործընթացի լիարժեք մասնակիցներ» դրամաշնորհային ծրագրի նպատակն է ապահովել ԱՃԹՆ-ի ստանդարտի 1-ին պահանջի 1.3 կետի (Քաղաքացիական հասարակության մասնակցություն), 7-րդ պահանջի 7.1 կետի (Հասարակական դեբատների անցկացում) և Քաղաքացիական հասարակության մասնակցության արձանագրության 2.5 կետի (Հասարակության կողմից որոշումների կայացման գործընթացի ապահովում) կատարումը:

Որպես ծրագրի թիրախ ընտրված Լոռի, Գեղարքունիք, Սյունիք մարզերի հանքարդյունաբերությանն առնչվող համայնքներից (Լոռու մարզի Ախթալա (+Ճոճկան, Մեծ Այրում), Շնող (+Թեղուտ), Գեղարքունիքի մարզի Սոթք, Սյունիքի մարզի խոշորացված Կապան (Գեղանուշ) Քաջարան, (Արծվանիկ, Սյունիք) բնակավայրեր, Մեղրի (+ Ագարակ)) երկրորդ այցելությունը կազմակերպվել է դեպի Գեղամասար խոշորացված համայնքի Սոթք բնակավայր: Տես նկար N1

Նկար N1

Գեղամասար համայնքը կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում 09.06.2017թ. ՀՕ-93 Ն կատարված փոփոխության արդյունքում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք, Ազատ, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Գեղամասար, Դարանակ, Կախակն, Կութ, Կուտական, Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Տրետուք, Փամբակ,

Փոքր Մասրիկ գյուղական համայնքների միավորումից: Նոր մարմնի լիազորություններն ուժի մեջ մտել են 2017 թվականի նոյեմբերի 13-ից[1]:

Գեղամասար համայնքը գտնվում է Գեղարքունիքի մարզում՝ Արևելյան Սևանի և Վարդենիսի լեռնաշղթաների ստորոտներում, Սևանա լճի հյուսիսային և արևելյան ափերին: Գավառ մարզկենտրոնից այն գտնվում է 90 կմ և Վարդենիս քաղաքից՝ 18 կմ հեռավորության վրա: Կլիման աչքի է ընկնում ցուրտ ձմեռներով և զով ամառներով: Համայնքի տարածքով է անցնում Վարդենիս- Մարտակերտ ռազմավարական նշանակության ավտոճանապարհը, որը միմյանց է կապում Արցախի և Հայաստանի Հանրապետությունները: Գեղամասար համայնքի տարածքով անցնում է նաև Սևան-Շորժա-Վարդենիս-Սոթք երկաթուղին:

Այսօր արդեն խոշորացված Գեղամասար համայնքը զբաղեցնում է 544,75կմ^2 տարածք, ունի 9611 բնակիչ: Գեղամասար համայնքի կենտրոնը Սոթք բնակավայրն է:[2] Սոթքի բնակիչների թիվը 2008-ին կազմել է 1135 մարդ, իսկ 2011թ՝ 824[3]: Ըստ 2018թ պաշտոնական տվյալների՝ Սոթքում ընտանեկան նպաստ ստանում է 65 ընտանիք, սոցիալական նպաստ՝ 12, հրատապ եռամյակային օգնություն՝ 7 ընտանիք[4]:

Սոթքում, ինչպես և Գեղամասար համայնքի մնացած բոլոր բնակավայրերում հիմնականում ապրում են Ադրբեջանի հայաբնակ տարբեր շրջաններից բռնագաղթված հայ ընտանիքներ, որոնց հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն են: Նրանց մի մասը ներգրավված է հանքարդյունաբերության և հանրային ծառայությունների ոլորտներում: Համայնքի տարածքում «Գեոպրոմայնինգ Գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից շահագործվում է Սոթքի ոսկու հանքավայրը:

---

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=114383
[2] http://gegharkunik.mtad.am/about-communities/284/
[3] https://www.citypopulation.de/php/armenia-gegharkunik.php

[4] http://www.mlsa.am/?page_id=368

Նկար N2 Սոթքի ոսկու հանքի տարածք

hanqhttps://en.wikipedia.org/wiki/File:Sotk_gold_mine.jpg

Փորվածքների և հանքային աշխատանքների մնացորդների հետքերը վկայում են, որ Սոթքի հանքավայրը շահագործվել է հնուց ի վեր: 1951թ վերաբացված հանքավայրը շահագործվում է առ այսօր: Ըստ մորֆոլոգիայի, չափերի և տեղադրման պայմանների այստեղ առկա են երակներ, հանքային սյուներ, ոսպնյակներ և երակիկացանավոր հանքայնացման գոտիներ: Հանքանյութը հիմնականում ներկայացված է բնածին ոսկով և արծաթով, ինչպես նաև դրանց թելուրիդներով: Նախկինում ստորգետնյա եղանակով (հանքային երակներով) շահագործվող հանքավայրն այսօր շահագործվում է հանքայնացման որակական հատկանիշներով ավելի ցածր համարվող բաց եղանակով: Մանրացված հանքաքարերի հետագա վերամշակումն իրականացվում է Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում:

Մինչ համայնքների խոշորացումը Սոթքը համարվել է հանքի միակ ազդակիր համայնքը: Այս հանգամանքը բնակավայրին հնարավորություն էր տալիս հանքի գործունեության բացասական հետևանքների կանխարգելմանն ու հետևանքների վերացմանը միտված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով բնապահպանական և սոցիալական ծրագրերի իրականացման համար օգտվել ընկերության բնապահպանական վճարներից: Համայնքների խոշորացումից հետո ավտոմատ ձևով հանքի ազդակիր համայնք է համարվում ողջ Գեղամասարը, որը կարող է օգտագործել բնապահպանական սուբվենցիաները նույն վճարաչափով իր 18

բնակավայրերի համար: Բնապահպանական վճարները նպատակային օգտագործելու համար անհրաժեշտ է վերանայել դրանց օգտագործման մեխանիզմները, քանզի նոր վարչական սահմաններում հայտնված Գեղամասար համայնքի բնակավայրերը հանքից խիստ տարբեր հեռավորությունների վրա են գտնվում և տարբեր չափով բացասական ազդեցություն կրում:

Հայաստանը, 2017 թվականին դառնալով Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) թեկնածու երկիր[5], պարտավորություններ է ստանձնել՝ պետական, գործարար համակարգերի և քաղաքացիական հասարակության երկխոսության միջոցով հրապարակային ձևով ապահովելու արդյունահանող ճյուղերի գործունեության ֆինանսական թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Այս առնչությամբ մեր ձեռնարկած ուսումնասիրությունը նպատակ ուներ՝ պարզելու ազդակիր բնակչության գնահատականը «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի կողմից Սոթքի ոսկու հանքավայրի շահագործման սոցիալական ազդեցությունների վերաբերյալ, հանքի շահագործման հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարմանն ուղղված վերաբերելի օրենսդրության մասին Սոթքի բնակիչների տեղեկացվածության մակարդակը, «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի կողմից բնակավայրին հատկացվող սոցիալական և ֆինանսական աջակցության մասին, համայնքի ներկայացուցիչներին ԱՃԹՆ գործընթացում ներգրավվելու և ԱՃԹՆ-ի Բազմաշահառու խմբի այլընտրանքային/գործող անդամ դարձնելու հնարավորությունների մասին:

Մասնավորապես, Սոթք բնակավայրի վրա հանքի գործունեության սոցիալական ազդեցությունների, բնակչության իրազեկվածության ու ԱՃԹՆ-ի գործընթացում մասնակցային վարքի ձևավորման հնարավորությունների գնահատման նպատակով իրականացված խորին հարցազրույցը ձևակերպել էր հետևյալ խնդիրները՝

1. Բացահայտել հանքի գործունեության դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ բնակչների տեղեկացվածության մակարդակը և դրանք ապահովող տեղեկատվության աղբյուրները

[5] https://eiti.org/news/eiti-board-welcomes-armenia-to-eiti-family

2. Արձանագրել հանքի շահագործման արդյունքում մթնոլորտային օդին, ջրին, հողին հասցված վնասների վերաբերյալ բնակչության գնահատականները
3. Պարզել հանքի շահագործման հետևանքով վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ բնակիչների իրազեկվածության մակարդակը
4. Պարզել Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործընթացներում բնակչության մասնակցության հնարավորությունները
5. Արձանագրել օրենսդրության կիրարկմամբ հանքի շահագործման հետևանքների հաղթահարման բնակիչների առաջարկությունները

Նշված հետազոտական խնդիրների լուծման արդյունքներով մշակվել են առաջարկություններ՝ ուղղված քաղաքացիական հասարակության կողմից բնակչության մասնակցային վարքը ձևավորելուն ու ԱՃԹՆ գործընթացներում լիակատար ընդգրկվելու հնարավորությունների օգտագործմանն ու դժվարությունների հաղթահարմանը:

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՍՓՈՓՈՒՄ

Հարցազրույցի նպատակի՝ Սոթք բնակավայրի վրա «ԳեոՊրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի գործունեության սոցիալական ազդեցությունների, բնակչության իրազեկվածության ու ԱՃԹՆ-ի գործընթացում ընդգրկվելու մասնակցային վարքի ձևավորման հնարավորությունների բացահայտման համար ընտրվել է խորին հարցազրույցի մեթոդը:

Որպես գործիք ընտրվել է հարցազրույցի ուղեցույցը, որի բաժիններն են.

1. հանքի շահագործման դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները
2. ընտրված համայնքների կենսագործունեության վրա հանքի ազդակիր համայնքների օդին, ջրին, հողին հասցված վնասների գնահատականները

3. բնակիչների՝ սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը հանքի շահագործման արդյունքում առաջացող վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման հարցերում
4. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները և հանքի շահագործման հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարման վերաբերյալ բնակիչների առաջարկությունները

Որպես հարցման օբյեկտ ընտրվել է Սոթք բնակավայրը: Հարցազրույցը վարվել է 16 տնային տնտեսություններում: Հարցազրույց վերցվել է 8-ը իգական և 8-ը արական սեռի ներկայացուցչից, հետևյալ տարիքային խմբերից (26-35) -7 տնային տնտեսության ներկայացուցիչ, (36-45) -3 տնային տնտեսության ներկայացուցիչ, (46-55)՝ 2 (56 և ավել)՝ 5:

Հարցազրույցին մասնակցել են հողագործ, մանկավարժ, ճարտարագետ, հաշվապահ, բուժաշխատող մասնագիտական խմբերի ներկայացուցիչները:

Նկար 3 Հարցազրույց Սոթքում

Հարցազրույցները բացահայտեցին, որ հանքի շահագործման սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները եղել են հանրային լսումները, համայնքային ժողովներն ու քննարկումները, որոնք անցկացրել է «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի ղեկավարությունը, սակայն քչերն են դրանց մասնակցել: Հատուկ շեշտվեց, որ ընկերության ղեկավարությունն իր ծավալած

գործունեությամբ հնարավոր բացասական ազդեցության մասին բնակչությանը չի տեղեկացրել:

Հանքի ազդակիր համայնքի բնակչության գնահատականները մթնոլորտային օդին, ջրին, հողին հասցված վնասների վերաբերյալ բացասական են, քանզի հանքից տարածվող փոշին վնասում է գյուղատնտեսական արտադրանքը: Առողջության վրա հանքի բացասական ազդեցությունների մասին բնակիչները չեն արտահայտվել: «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի կողմից աշխատատեղերի տրամադրման հնարավորության առնչությամբ տնային տնտեսությունների կեսը դրական է արտահայտվել:

Հանքի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների, սեփական իրավունքների մասին բնակիչների իրազեկվածությունը խիստ ցածր է: Պարզվեց նաև, որ անգամ համայնքապետարանի աշխատողները տեղյակ չէին 2001 թվականին ընդունված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի մասին, որը հնարավորություն է տալիս ազդակիր համայնքին բնապահպանական կամ առողջապահական ծրագրի դիմաց պետական բյուջե «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերության կատարած բնապահպանական վճարներից առանձին սուբվենցիաներ ստանալ և ուղղել ընկերության գործունեությունից առաջացած վնասակար ազդեցության մեղմմանը[6]:

Մեր զրուցակիցները տեղյակ չէին նաև ԱՃԹՆ գործընթացներում Հայաստանի ընդգրկվելու փաստից և նրանից, որ իրենք կարող են սեփական շահերը պաշտպանելու համար ներգրավվել դրանցում: Բնակչության շրջանում առկա անտեղյակությունը խնդիրներ է առաջացնում ԱՃԹՆ գործընթացներում նրանց ընդգրկվելու հնարավորության օգտագործման համար:

Բնակիչների առջև հանքի շահագործումը թափանցիկ և հաշվետու դարձնելու ուղղությամբ բնակիչները կատարել են առաջարկներ՝ կապված.

---

[6] **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը** Ընդունված է 2001 թվականին, **«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

ա. պարբերական անցկացված անկախ փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքներով հանքի հասցրած վնասին համարժեք տուգանքների համայնքի բյուջե ուղիղ փոխանցում սահմանելու, բ. բնակիչների իրազեկվածության, իրավական գրագիտության մակարդակը ավելացնելու, գ. տարածաշրջանում համայնքների երիտասարդների ուժերով համայնքահեն բնապահպանական ՀԿ կազմավորելու հետ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋԻՆ. Հանքի շահագործման դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ բնակչության նախնական տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները:

Սոթք բնակավայրի տնային տնտեսություններում իրականացված խորին հարցազրույցները պարզեցին, որ հանքի ղեկավարությունը համայնքում անցկացրել է հանրային լսումներ:

Սոթք գյուղում Սոթքի ոսկու հանքավայրի վերազնիման ծրագրի ՇՄԱԳ-ի հանրային լսումները տեղի են ունեցել 2012 թվականին, որին մասնակցել են մարզային երկու՝ «Բլեջան» ՀԿ ք. Գավառից, «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ ք. Սևանից և երևանյան երկու ՀԿ՝ «ԷկոԼուր» և «Հայաստանի կանաչների միություն»[7]: Գյուղը տվել է իր համաձայնությունը ծրագրի իրականացման համար, ինչի արդյունքում ընկերությունը հանքարդյունաբերական գործունեություն է ծավալում գյուղից վարձակալված 1047 հեկտար հողերի վրա, որտեղ և կառուցել է հանքաքարի ջարդման-տեսակավորման տեղամասը և տեղադրում է առաջացած դատարկ ապարները և լցակույտերը:

2016 թվականին Սոթքում տեղի է ունեցել հանրային լսում/ քննարկում՝ հանքի ստորգետնյա եղանակով շահագործման վերաբերյալ: Բնակիչները հավանություն են տվել ընկերության առաջարկներին:[8]

---

[7] https://www.ecolur.org/hy/news/mining/--geopromining-gold--/4079/, https://www.aravot.am/2018/08/02/973547/

[8] http://aarhus.am/?page_id=34, http://aarhus.am/Expert_2015/Report%20Sotk%20Hanq%20F1%20F0_arm.pdf

Մեր հարցազրույցի մասնակիցներից հանրային լսումներին մասնակցել էին մի քանի (16-ից 4-ը) բնակիչ, սակայն նրանցից և ոչ մեկը չի հիշում, որ որևէ բացասական ազդեցության մասին իրենք տեղեկացված լինեն: Բնակիչները փաստում էին, որ ընկերության ղեկավարությունը ժամանակ-առ-ժամանակ հանդիպում է նաև համայնքապետի հետ, սակայն արդյունքների մասին իրենք չեն տեղեկացվում:

ԵՐԿՐՈՐԴ. Հանքի ազդակիր համայնքի մթնոլորտային օդին, ջրին, հողին հասցված վնասների վերաբերյալ բնակչության գնահատականները

Սոթք բնակավայրում հանքի շահագործման արդյունքում պատճառված դրական և բացասական ազդեցությունների գնահատականներն այսպիսի պատկեր ստացան՝

Աղյուսակ 1

	Բացասական ազդեցություն (Տնային Տնտ.)	Դրական ազդեցություն (SS)	Դժվարանում եմ պատասխանել (SS)
1. Օդի մաքրություն	12	0	4
2.Ոռոգման ջրի մաքրություն	10	0	6
3.Բանջարեղենի և մրգի որակ	13	0	3
5.Համայնքային և միջհամայնքային Ճանապարհների որակ	7	0	9
6.Գյուղատնտեսական նշանակության հողերի որակ	6	0	10
7.Աշխատատեղեր	0	7	9
8.Համայնքի խոցելի խմբերի աջակցություն	0	3	13

Գրեթե բոլորը բացասական գնահատական են տվել հատկապես օդի մաքրությանը՝ հիմնավորելով, որ հանքավայրում պայթեցումներից ու քամուց բարձրացող խիտ փոշին փչացնում է գյուղատնտեսական արտադրանքը: Ըստ հարցվածների՝ առաջանում են «կապույտ», «կանաչ» փոշու ամպեր, որոնք հնարավոր է՝ հագեցած են վնասակար նյութերով և տարածվում են Սոթքից բացի նաև հեռու գտնվող բնակավայրերի վրա: «Գունավոր» փոշին վնասակար է բույսերի, հողի՝ հատկապես

միայն անձրևաջրերով ոռոգվող հողերի համար (կան բնակավայրեր կամ թաղամասեր, որոնք ոռոգման ջուր չունեն և միայն անձրևի հույսին են): Հանքի շահագործման այսպիսի ակնառու ազդեցությունները մասնագիտական հետազոտման կարիք ունեն: Բնակիչները չէին խոսում իրենց առողջության վրա հանքի բացասական ազդեցությունների մասին: Ընդորում, ընկերության կողմից իրականացվող բնակչության առողջական վիճակի մոնիթորինգի արդյունքները չեն ներկայացվում բնակչությանը, իսկ համայնքապետարանը տեղեկացվել է, որ արդյունքները «բավարար են»: Այս գնահատականը ստուգման և անկախ փորձագիտական ստուգումների արդյունքների հետ համեմատելու կարիք ունի:

Վարդենիս համայնքի «Աստղավարդ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ-ի նախագահի և Սոթքում «Վորլդ Վիժըն» կազմակերպության կողմից նշանակված համայնքային շրջիկ սոցիալական աշխատողի հետ հատուկ փորձագիտական հարցազրույցներից տեղեկացանք, որ տարածաշրջանի մյուս համայնքների համեմատությամբ այստեղ մեծ թիվ են կազմում Էպիլեպսիայով (5 երեխա), Մանկական ուղեղային կաթվածի տարբեր ֆիզիկական ու մտավոր բարդ դրսևորումներով (6 երեխա) և տեսողական սուր խնդիրներ ունեցող (6 երեխա) երեխաները: Իհարկե, մենք մասնագիտական եզրակացություն չունենք, թե սա որքանով է կապված հանքի շահագործման հետ, սակայն կարծում ենք՝ մոտ 200 տնային տնտեսություն ունեցող համայնքի համար սա չափազանց մեծ թիվ է:

Ինչ վերաբերում է «ԳեոՊրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի գործունեության՝ համայնքի վրա թողած դրական ազդեցություններին, մենք 16 հարցվածից 7-ի կողմից ստացանք դրական գնահատական աշխատատեղերի տրամադրման հետ կապված: Կային դժգոհություններ առ այն, որ Սոթքից քչերն են ընդունվում աշխատանքի, որովհետև հանքում ղեկավար պաշտոններ զբաղեցնող այլ տարածաշրջանների ներկայացուցիչները իրենց հետ աշխատողներ են բերում:

Սոթք բնակավայրի մի քանի խոցելի խմբի ներկայացուցչի հանքի կողմից ցուցաբերվող աջակցություն են հիշատակել հարցազրույցի որոշ մասնակիցներ:

ԵՐՐՈՐԴ. Սեփական իրավունքների մասին բնակիչների իրազեկվածությունը՝ հանքի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ

2001 թվականին ընդունված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը հնարավորություն է տալիս ազդակիր համայնքին բնապահպանական կամ առողջապահական ծրագրի դիմաց պետական բյուջե «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերության կատարած բնապահպանական վճարներից առանձին սուբվենցիաներ ստանալ և ուղղել ընկերության գործունեությունից առաջացած վնասակար ազդեցության մեղմմանը: Սուբվենցիաներով իրականացվում են բնապահպանական ծրագրեր՝ «Թափոնների անվտանգ հեռացում», «Հատուկ պոլիգոնների ստեղծում», «Գործող աղբավայրերի բարելավում», «Աղտոտված տարածքների մաքրում ու վերականգնում», «Դեպի ջրային ռեսուրսներ վնասակար նյութերի արտահոսքի նվազեցում, կասեցում, ջրային ռեսուրսների պահպանություն», «Կեղտաջրերի վերամշակում, կոյուղու համակարգի բարելավում», «Օդի մաքրության պահպանություն», «Աղմուկից, վիբրացիայից և ճառագայթահարումից պաշտպանություն», «Աղտոտված հողի մաքրում, աղտոտող նյութերի վնասազերծում», «Անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբանական ռեսուրսների պահպանություն», «Տեղեկատվության տարածում, էկոլոգիական կրթություն», «Բնակչության առողջական վիճակի զննությունների իրա-կանացում» և «Անհրաժեշտ բժշկական սարքավորումների տրամադրում»:

Մեր այն հարցին. «ինչպե՞ս կգնահատեիք վերջին 3-5 տարում համայնքում սոցիալական հետևանքների կանխարգելմանն ու ազդեցությունների հաղթահարմանն ուղղված իրականացված կամ ընթացքի մեջ գտնվող ծրագրերը», ստացանք 2-3 իրարամերժ պատասխան: Սրանից կարել է եզրակացնել, որ կամ վերը նշված ուղղություններով համայնքում ոչ մի ծրագիր չի իրականացվել, կամ բնակիչներն ուղղակի անտեղյակ (կամ անտարբեր) են համայնքում կատարվող աշխատանքներից:

Մեր 16 հարցազրույցներից միայն 6-ի դեպքում էին մարդիկ «մասամբ ծանոթ» «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքին: Սակայն նրանցից և ոչ մեկը օրենքի

օգտակարությունը համայնքի համար չկարողացավ ներկայացնել: Սա էր երևի պատճառը, որ Սոթք բնակավայրն իր համայնքապետարանի պաշտոնյաներով վերջին տարիներին հանքի հնարավոր ազդեցությունների կանխարգելման և արդեն թողնված ազդեցությունների հաղթահարմանն ուղղվող օրենքով նախատեսված բնապահպանական վճարից չեն օգտվել:

ՉՈՐՐՈՐԴ. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները:

Սոթք բնակավայրում բնակչությունը գրեթե տեղեկացված չէ հանքի շահագործմանն առնչվող օրենսդրության մասին: Գեղամասար համայքնի 18 բնակավայրում չկա գործող հասարակական կազմակերպություն, չկան ձևավորված ակտիվ հասարակական խմբեր: Այս առումով ԱՃԹՆ գործընթացներում Սոթքի բնակչության ընդգրկվելու հնարավորությունները թույլ են: Այս խնդիրը հաղթահարելու մեծագույն դեր է հատկացվում քաղաքացիական հասարակությանը: Հարցազրույցները բացահայտեցին, որ Սոթք բնակավայրի մեր զրուցակիցները տեղյակ չեն մարզային ՀԿ-ների գոյության կամ նրանց գործունեության մասին:

Ընկերության գործունեությունը թափանցիկ և հաշվետու դարձնելու ուղղությամբ բնակիչները կատարել են հետևյալ առաջարկությունները՝

1. Հանքի շահագործման բացասական ազդեցությունների նկատմամբ համայնքը պետք է իրավաբանական լծակ ունենա, յուրաքանչյուր տիպի վնասին համարժեք տուգանքներ պետք է սահմանվեն, որի համար գումարը ընկերությունն ուղիղ կփոխանցի համայնքի բյուջե՝ կոնկրետ դրանք վերացնելու նպատակով:
2. Հողի, ջրի, օդի եռամսյա հետազոտություններ պետք է արվեն անկախ փորձագետների կողմից, ներկայացվեն Գեղամասար համայնքի բնակչությանը և քննարկվեն հանքի ղեկավարության հետ:
3. Ընկերության ղեկավարությունն ուղիղ շփում պետք է ունենա բնակչության հետ, ոչ թե իր հարցերը լուծի միայն համայնքապետի հետ:
4. Հանքում նոր աշխատատեղեր բացվելիս՝ պետք է բաց մրցույթ հայտարարվի, որպեսզի այլ համայնքից եկած ղեկավար պաշտոն զբաղեցնողներն իրենց ազգականներին չբերեն իրենց հետ:

5. Ընկերությունը պետք է պարտավորվի լիարժեք բուժզննումներ կազմակերպելու ու բժշկական մասնագիտական ծառայություն ստեղծելու ազդակիր բնակավայրերում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր հարցազրույցներն ու քննարկումները Թեղուտ, Շնող, ինչպես նաև Սոթք բնակավայրերում թույլ տվեցին արձանագրել, որ բնակիչները կարիք ունեն հասկանալու, թե «....համայնքի տարածքում գտնվող ընդերքը ազգային, պետական, համաժողովրդական, թե համայնքային սեփականություն կամ հարստություն է համարվում և որքանով է հանքի շահագործումից ստացված օգուտը նպաստում ազդակիր համայնքի զարգացմանը, ոչ թե միայն հասցված մեծ վնասների դիմաց ոչ համարժեք փոխհատուցում ստանալուն»: Այս ենթատեքստում հարցադրում է առաջանում, թե ինչպես է առաջացել «հանքի տեր» արտահայտությունը, որը լիովին համապատասխանում է բնակչության հանդեպ հանքը շահագործողների դրսևորած «տիրոջ» վարքին և գյուղապետերի հետ նրանց հատուկ բարիդրացիական հարաբերություններին ու բնակիչների խոցելի վիճակին:

Այսպիսով՝ հարցազրույցի ժամանակ արված բացահայտումների հիման վրա կարելի է եզրակացություն անել, որ

Ա. «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի գործունեության սոցիալական բացասական ազդեցությունները բնակչությանը տեսանելի են, և դրանք էականորեն ազդել են նրանց գյուղատնտեսական արտադրանքի որակի վրա, իսկ փոշին, աղտոտված մակերևույթային ջրային հոսքերը վնասում են նաև մարդկանց առողջությանը:

Բ. Բնակիչների գերակշիռ մասն անտեղյակ է ընկերության և համայնքապետարանի ղեկավարության միջև հանդիպումների արդյունքներից և ընկերության ներդրումներից, վնասների կանխարգելման ու հաղթահարման աշխատանքներից, խիստ ցածր է բնակչության իրավական գրագիտության մակարդակը:

Գ. Տեղական աշխատուժը վատ է ընդգրկված հանքի աշխատանքներում:

Ե. Վարդենիսի տարածաշրջանում բնապահպանական ՀԿ-ների բացակայությունը նպաստավոր չէ բնակչության մասնակցային վարքը խթանելու և ԱՃԹՆ գործընթացներին լիարժեք մասնակցելու համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Իրականացնել անկախ հետազոտություն՝ բացահայտելու հանքի շահագործման արդյունքում շրջակա միջավայրի՝ օդի, հողի ջրի աղտոտվածության աստիճանը և դրա ազդեցությունը հանքի ազդակիր բնակավայրերի սոցիալական և առողջական վիճակի վրա:

Բ. Փոխել բնապահպանական վճարների հաշվարկման մեխանիզմները և ավելացնել արտանետումների դիմաց բնապահպանական վճարի չափը, քանզի հասցված վնասների հաղթահարումը շատ ավելին մեծ գին է պահանջում: Վճարների չափի վերանայման ժամանակ հաշվի առնել նաև այն նոր իրողությունը, որ Սոթքն ընդգրկվել է խոշորացված Գեղամասար համայնքի կազմում հանքի ազդեցության տակ գտնվող այլ բնակավայրերի հետ միասին, որոնք կրում են հանքի բացասական սոցիալական ազդեցությունները՝ հատկապես օդի և ոռոգման ջրի աղտոտման տեսքով:

Գ. Համապատասխան նախարարությունների օժանդակությամբ աշխատանքներ տանել Գեղամասար համայնքի 18 բնակավայրերի փախստական <u>ողջ բնակչությանը</u> որակյալ կրթության, մշակութի, սպորտի ոլորտներում ներառելու, ինչն էականորեն կհաղթահարեր նրանց օտարվածությունը, կդարձներ նրանց առավել սրտացավ իրենց համայնքի՝ որպես ամբողջի հանդեպ և իրենց իրավունքները պաշտպանելու գործում կդարձներ առավել ակտիվ:

Դ. Փոխել տուգանքերի հաշվարկման մեխանիզմները՝ ընդերքօգտագործողի համար սահմանելով վնասին համարժեք տուգանք~~ներ~~ և գումարը փոխանցել ուղիղ համայնքի բյուջե նպատակային օգտագործման համար:

Ե. Բաց մրցույթ հայտարարել ընկերությունում բացվող յուրաքանչյուր աշխատատեղի համար:

Զ. Բարձրացնել բնակիչների իրազեկվածությունը ընկերության գործունեության և համայնքային հատկացումների մասին, իրավական գրագիտության մակարդակը:

Աջակցել տարածաշրջանում քաղաքացիական հասարակության ձևավորմանը և նրանց կարողությունների ավելացմանը:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները՝ գործընթացի լիարժեք մասնակիցներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում: